



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. խաչատրյան 1, arags.hamaync@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2023 թվական N 26-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի
ավագանու 2023 թվականի մարտի 14-ի առաջին նստաշրջանի երկրորդ նիստի
օրակարգը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

կողմ-13

դեմ-0

ձեռնպահ-0

1. Ղազարյան Ղազար
2. Հարությունյան Վահրամ
3. Համբարյան Մելանյա
4. Նահապետյան Տիգրան
5. Շահինյան Շահեն
6. Մնացականյան Գայանե
7. Անդրեասյան Հայրապետ
8. Առաքելյան Արմեն
9. Մակարյան Մարյամ

10. Մկրտչյան Սարիբեկ
11. Պողոսյան Արմինե
12. Սեփիանյան Սևան
13. Մարկոսյան Սեյրան



ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի մարտի 14
Արաքս համայնք



ՕՐԱԿԱՐԳ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՐԱՔԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒՔՎԵՆՅՈՒ, ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՐՔԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0241 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

8. ԳԱՅ ԵՎ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.4432 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0822 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0884 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0908 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.1852 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.2094 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.2298 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ձեկ.՝ Ղ. Ղազարյան

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՄՈՐԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.2817 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

Լրացուցիչ հարց

17. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ղ. Ղազարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա, Խաչատրյան 1, arags.hamaynp@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2023 թվական N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի բյուջեի կատարման 2022 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

կողմ- 10

դեմ- 0

ձեռնպահ- 3

1. Ղազարյան Ղազար
2. Հարությունյան Վահրամ
3. Համբարյան Մելանյա
4. Նահապետյան Տիգրան
5. Շահինյան Շահեն
6. Մնացականյան Գայանե

7. Անդրեասյան Հայրապետ

8. Առաքելյան Արմեն

9. Մակարյան Մարյամ

10. Մկրտչյան Սարիբեկ

11. Պողոսյան Արմինե

12. Սեփիանյան Սևան

13. Մարկոսյան Սեյրան

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի մարտի 14
Արաքս համայնք



Հայաստանի Հանրապետության
Մրցակիտի մարզի Արաբս (Բնակարանի ապագա) 2023 թվականի մարտի 14-ին 27-՝ 1 օրոշման

ԿԱՏԱՐՈՂՎԱԾ ՏԱՐԵԿԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԲՍ (ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՊԱԳԱ) 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՖԵՐԻ ԿԱՏԱՐՈՂՎԱԾ ՏԱՐԵԿԱԼ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ				
Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՊԱՆ /հազ. դրամ/	ՓԱՍՏԱՑԻ /հազ. դրամ/	ԿԱՏԱՐՈՂՎԱԾ %
1	Հողի հարկ	27182.9	28662.0	105.44
2	Գույքահարկ շենք և շինությունների	3355.2	5706.2	170.07
3	Անշարժ գույքի հարկ	88680.8	57798.7	65.18
4	Գույքահարկ փոխադրամիջոցների	156584.9	143520.3	91.66
5	Տեղական վճար	5383.4	10597.2	196.85
6	Պետական բյուջեից դոտացիա	564929.0	565747.4	100.14
7	Հողերի վարձակալությունից մուտքեր	11067.8	9330.2	84.30
8	Գույքի վարձակալությունից մուտքեր	2039.3	1084.8	53.19
9	Տեղական վճար	55595.3	56311.5	101.29
10	Ինքնակամ շին. օրինականացման գումար	0.0	262.9	0.00
10	Մուտքեր տույժերից	0.0	5650.0	0.00
11	Այլ եկամուտներ	500.0	19284.9	3856.98
12	Մուլվենցիա	185586.1	191224.7	103.04
13	Լվիրատվություններ	12674.0	12608.3	99.48
14	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հաշվառված	-32235.0	-32235.0	100.00
15	Տարեկապի ազատ մնացորդ վ/բ	3478.4	0.0	0.00
16	Տարեկապի ազատ մնացորդ ֆ/բ	386901.2	0.0	0.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	1113578.7	1107789.0	99.50

ԾԱԽՍԵՐ

2022թ.				
Հ/Հ	ԲՅՈՒՇԱՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐՆ ԸՆՏ ԳՈՐԾԱՊՈՒՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ	ՊԼԱՆ /հազ. դրամ/	ՓԱՍՏԱՅԻ /հազ. դրամ/	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ %
1	Տեղական ինքնակառավարում	389400,4	301616,1	77,46
2	Ընդհանուր բնույթի ծառայություններ	7160,2	714,4	9,98
3	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	45017,6	31303,6	69,54
4	Կառավարության տարբեր մակարդակներից	200,0	200,0	100,00
5	Գյուղատնտեսություն	6240,0	5027,5	80,57
6	Ոռոգում	21219,0	18060,5	85,11
7	Նավթամթերք և բնական գազ	79264,9	76801,5	96,89
8	Ճանապարհային տրանսպորտ	38228,6	34309,8	89,75
9	Արբանյանություն	52500,0	40397,0	76,95
10	Զրամատակարարում	69833,0	56283,9	80,60
11	Փորոցների լրացման, ...	29883,0	18773,3	62,82
12	Առողջապահական հարակից ծառայություններ	1000,0	101,3	10,13
13	Հանգստի և սպորտի ծառայություններ	23148,8	7334,8	31,69
14	Գրադարաններ	3500,0	3003,0	85,80
15	Սննդամթերքի տներ , ակումբներ	55748,0	44388,1	79,62
16	Այլ մշակութային ծառայություններ	20900,0	8702,4	41,64
17	Հուշարձանների վերականգնում և պահպանում	6350,4	5320,0	83,77
18	Նախարարության ուսուցում	543203,6	476702,7	87,76
19	Արտադրության ուսուցում	19570,8	18830,2	96,22
20	Սոց. օգնություն	30000,0	12487,3	41,62
21	Պահուստային ֆոնդ	108590,0	0,0	0,00
22	Տնտեսական հարաբերություններ	-47000,0	-87260,3	185,66
	ընդամենը	1503958,3	1073097,1	71,40

ԾԱԽՍԵՐ

2022թ					
Հ/Հ	ԲՅՈՐԶԵՏԱԳՐԱ ԾԱԽՍԵՐԱ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳՐԱԿԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ	ՀՈՂՎԱՅ	ՊԼԱՆ /հազ. դրամ/	ՓԱՍՏԱՍՏԻ /հազ. դրամ/	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ %
1	Աշխատավարձ	4111	303171,8	247766,6	81,7
2	Լեռնագետիկ ծառայություններ	4212	43233,4	32727,7	75,7
3	Կոմունալ ծառայություններ	4213	33300	32790,9	98,5
4	Կապի ծառայություններ	4214	2263	2172,8	96,0
5	Ապահովական ծառայություններ	4215	300	92	30,7
6	Ներքին գործուղում	4221	800	464,8	58,1
7	Համակարգչային ծառայություններ	4232	1371	1370,4	100,0
8	Տեղեկատվական ծառայություններ	4234	500	490	98,0
9	Ներկայացուցչական ծառայություններ	4237	16900	9919,8	58,7
10	Ընդհանուր բնութագրող ծառայություններ	4239	55654	36423,3	65,4
11	Մամուլագրական ծառայություններ	4241	5960,2	2347,5	39,4
12	Զենքերի և շինությունների ընթացիկ նորոգում	4251	24000	13855,6	57,7
13	Մեքենաների և տարրափոխումների ընթացիկ նորոգում	4252	2000	1812	90,6
14	Փրատեխնիկային նյութեր և հագուստ	4261	3000	1405	46,8
15	Տրանսպորտային նյութեր	4264	6073,7	1440,3	23,7
16	Կենցաղային և հանրային սնունդի նյութեր	4267	1000	406,8	40,7
17	Հատուկ նպատակային նյութեր	4269	31775	19237,3	60,5
18	Սուբսիդիաներ	4511	190124,2	164701,6	86,6
19	Ընթացիկ դրամաշնորհ	4637	7312,4	3241,3	44,3
20	Սյու կապիտալ դրամաշնորհ	4657	18625	16270,8	87,4
21	Սյու նպատակներ բյուջեից	4729	30000	12487,3	41,6
22	Պարտադիր վճարներ	4823	608,3	574,7	94,5
23	Պահուստային միջոցներ	4891	108500	0	-
24	Զենքերի և շինությունների կառուցում	5112	331811,6	311654,5	93,9
25	Զենքերի և շինությունների կապիտալ նորոգում	5113	241619,3	187472,3	77,6

26	Տրանսպորտային նյութեր	5121	1000	593	59,3
27	Վարչական սարքավորումներ	5122	23100,4	9640,5	41,7
28	Նախագծահետազոտական ծախսեր	5134	66865	48818,4	73,0
29	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	8131	0	-1500	-
30	Հողի իրացումից մուտքեր	8411	~47000	-85760,2	182,5
			1503868,3	1073097,1	71,4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, hbn.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2023 թվական N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից՝

Ավագանու անդամներ՝

կողմ 10

դեմ- 0

ձեռնպահ-3

1. Ղազարյան Ղազար
2. Հարությունյան Վահրամ
3. Համբարյան Մելանյա
4. Նահապետյան Տիգրան
5. Շահինյան Շահեն
6. Մնացականյան Գայանե
7. Անդրեասյան Հայրապետ

8. Առաքելյան Արմեն
9. Մակարյան Մարյամ
10. Մկրտչյան Սարիբեկ
11. Պողոսյան Արմինե
12. Սեփիանյան Սևան
13. Մարկոսյան Սեյրան

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի մարտի 14
Արաքս համայնք



ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

Արաքս համայնքի 2022 թվականի բյուջեի փաստացի եկամուտները պլանավորված 1113578.7 հազար դրամի դիմաց կազմել են 1107789.0 հազար դրամ: Եկամուտների կատարողականը կազմել է 99.5%:

Վարչական բյուջեի եկամուտները պլանավորված 915318.6 հազար դրամի դիմաց կատարվել են 903956.0 հազար դրամով, կատարողականը՝ 98.8%:

Ֆոնդային բյուջեի եկամուտները պլանավորված 230495.1 հազար դրամի դիմաց կատարվել են 236068.0 հազար դրամով, կատարողականը 102.4%:

Համայնքի բյուջեի սեփական եկամուտների կատարողականը կազմել է 96.5 %՝ 338208.6 հազար դրամ, որը կազմում է բյուջեի եկամուտների 30.5%-ը:

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 390379,6 հազ. դրամ, որից վ/բ 3478,4 հազ. դրամ, ֆ/բ 386901,2 հազ. դրամ:

Համայնքի բյուջեի ծախսը պլանավորված 1503958,3 հազար դրամի դիմաց կազմել է 1073097,1 հազար դրամ, կատարողականը՝ 71,4%:

Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսը կազմել է 470918,4 հազար ՀՀ դրամ:

- 8226.7 հազ. դրամ փոխանցվել է Լուսազյուղ գյուղի փողոցների գազաֆիկացման նախորդ տարվա պարտք:
- 10800.4 հազ. դրամ փոխանցվել է Արտիմետ գյուղի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների նախորդ տարվա պարտք:
- 5520.0 հազ. դրամ փոխանցվել է համայնքի Արաքս, Լուսազյուղ, Գրիբոյեղով գյուղերում պոմպակայանի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության համար:
- Մարվել է Ջրարբի գյուղի փողոցների փոսալցման աշխատանքների գումարը՝ 996.6 հազ.դրամ:
- 1740.0 հազ. դրամ փոխանցվել է Առատաշեն գյուղի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար:
- 6976.8 հազ. դրամ փոխանցվել է համայնքի Գրիբոյեղով գյուղերի ոռոգման և խմելու ջրագծերի վերանորոգման և անցկացման համար:
- 2429.2 հազ. դրամ փոխանցվել է Խորոնք գյուղի լուսավորության ցանցի կառուցման և հեղինակային հսկողության նախորդ տարվա պարտք:
- 3525.5 հազ. դրամ փոխանցվել է Խորոնք գյուղի հուշարձան հուշահամալիրի կառուցման 2021 թ նախորդ տարվա պարտք՝ պետության մասնաբաժին:

- 15779.6 հազ. դրամ փոխանցվել է Ջրառատ գյուղի Մեծամորի խճուղու կառուցման նախորդ տարվա պարտք:
- 11859.0 հազ. դրամ փոխանցվել է համայնքի Գայ, Ակնաշեն և Գրիբոյեղով գյուղերի ճանապարհների ասֆալտ-բետոնե ծածկույթով փոսային վերանորոգման աշխատանքների համար:
- 322.6 հազ. դրամ փոխանցվել է ճանապարհների հետիոտնային անցումների գծանշման համար:
- 4560.0 հազ. դրամ փոխանցվել է միջհամայնքային ճանապարհների հարթեցման համար:
- 791.9 հազ. դրամ փոխանցվել է Ջրառատ գյուղի փողոցների ասֆալտապատման աշխատանքների տեխնիկական հսկողության գումար՝ պետության մասնաբաժնից:
- Ապագա, Ջրարբի, Մեծամոր, Ակնաշեն, Արտիմետ, Խորոնք, Առատաշեն, Լուսագյուղ, Հայկաշեն, Արաքս, Ջրառատ, Գայ և Գրիբոյեղով գյուղերի աղբաթափման համար փոխանցվել է 32900.0 հազ. դրամ, այդ գյուղերի փողոցների սան. Մաքրման աշխատանքների համար 7497.0 հազ. դրամ:
- Ջրառատ և Գայ գյուղերի ջրամատակարարման ցանցի աշխատանքների համար համայնքային բյուջեից փոխանցվել է 18348.4 հազ. դրամ, 18214.8 հազ. դրամ փոխանցվել է պետության մասնաբաժնից:
- Գայ գյուղի փողոցների լուսավորության կառուցման աշխատանքների համար փոխանցվել է 5450.2 հազ. դրամ, Մեծամոր, Առատաշեն համայնքների լուսավորության ցանցի կառուցման վրա ծախսվել է 999.9 հազ. դրամ: Ձեռք բերված 8693.9.9 հազ. դրամի լուսատու լեդ ալյումինե լարերը, Լեդ լամպերը և հարակից ապրանքներն ու ծառայություններն օգտագործվել է Ապագա, Ջրարբի, Մեծամոր, Ակնաշեն, Արտիմետ, Խորոնք, Առատաշեն, Լուսագյուղ, Հայկաշեն, Արաքս, Ջրառատ, Գայ և Գրիբոյեղով գյուղերի լուսավորության համակարգերի վերանորոգման համար: 1200.0 հազ. դրամ փոխանցվել է Ապագա և Ջրառատ գյուղերի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գումար:
- 5637.8 հազ. դրամ փոխանցվել է Ապագա գյուղի մարզադպրոցի վերանորոգման աշխատանքների, նախագծանախահաշվային փաստաթղթերի, փորձաքննության, տեխնիկական վիճակի հնտագոտության համար, սպորտային միջոցառումների և ծառայությունների համար փոխանցվել է 1697.0 հազ. դրամ:
- Ակնաշեն գյուղի մանկապարտեզի համաֆինանսավորմամբ կառուցման համար համայնքի բյուջեից փոխանցվել է 13007.7 հազ. դրամ, 1313.1 հազ. դրամ փոխանցվել է բարեգործական կազմակերպությանը, համայնքի Առատաշեն և Արաքս գյուղերի մանկապարտեզների գույքի և խաղահրապարակի համար:
- Գայ գյուղի մշակույթի տան առաջին հարկի հիմնորոգման և տեխնիկական հսկողության համար փոխանցվել է 4103.3 հազ. դրամ:

- Հայկաշեն, Արաքս, Գայ և Ջրառատ գյուղերի մշակույթի տների հիմնանորոգման և վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության ծառայությունների համար փոխանցվել է 12017.0 հազ. դրամ:
- 1640.0 հազ. դրամի դրամաշնորհ է փոխանցվել Ակնաշեն և Գայ գյուղերի նախակրթարաններին:
- 3250,0 հազ. դրամ փոխանցվել է Ակնաշեն, Արտիմետ, Արաքս գյուղերի դպրոցների խոհանոցների վերանորոգման աշխատանքների համար:
- Առատաշեն, Խորոնք և Ջրառատ գյուղերի մանկապարտեզների շենքի վերանորոգման աշխատանքների համար փոխանցվել է 67679,6 հազ. դրամ, որի մեջ մտնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, փորձաքննություն, տեխնիկական վիճակի հետազոտություն և աշխատանքներ:
- Արաքս, Ջրարբի, Արտիմետ և Մեծամոր գյուղերի մանկապարտեզների բակերի բարեկարգման համար փոխանցվել է 5902.1 հազ. դրամ:
- Գայ համայնքի մանկապարտեզի կաթսայատան տեխ. անվտանգության համար փոխանցվել է 150.0 հազ. դրամ:
- Գայ գյուղի արվեստի դպրոցին փոխանցվել է 15430.2 հազ. դրամ սուբսիդիա:
- Ապագա, Ջրարբի, Արտիմետ, Խորոնք, Առատաշեն, Լուսազյուղ, Ջրառատ, Գրիբոյեդով, Արաքս և Հայկաշեն գյուղերի մանկապարտեզներին հատկացվել է 123458.7 հազ. դրամ սուբսիդիա:
- 21924.4 հազ. դրամով ֆինանսավորվել են Արաքս, Խորոնք, Ջրարբի, Մեծամոր, Առատաշեն, Գայ և Ապագա գյուղերի մշակույթի տները:
- 4600.8 հազ. դրամ հատկացվել է համայնքի հանգուցյալների համար ծաղկեպսակներ ձեռք բերելու, 12487.3 հազ. դրամ աջակցություն է ցուցաբերվել հանգուցյալների, սոցիալապես անապահով ընտանիքներին, ինչպես նաև դրամական աջակցություն է հատկացվել համայնքի մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկներին և մարզիչներին:
- 968.20 հազ. դրամ հատկացվել է համայնքի բոլոր գյուղերի շրջանավարտներին նվերներ ձեռք բերելու համար:
- 3760.3 հազ. դրամ փոխանցվել է նվերներ առաջին դասարան հաճախած երեխաններին և ամանորյա նվերներ համայնքի երեխաներին:
- 3383.4 հազ. դրամ հատկացվել է համայնքում միջոցառումների կազմակերպման և անցկացման համար:
- 6487.9 հազ. դրամ փոխանցվել է Արտիմետ գյուղի նախորդ տարիների գազաֆիկացման աշխատանքների գումար:
- 45588.7 հազ. դրամ փոխանցվել է Ակնաշեն և Ջրառատ գյուղերի գազաֆիկացման աշխատանքների կատարման համար:
- 1994.5 հազ. դրամ փոխանցվել է Գայ գյուղի եկեղեցու երեսապատման աշխատանքների համար:
- 4655.2 հազ. դրամ փոխանցվել է համայնքում անասնաբուժական ծառայությունների համար:

➤ 2590.6 հազ. դրամ փոխանցվել է համայնքում գրադարանային ծառայությունների համար:

➤ Ա/Ձ Լյովա Խաչատրյանի և Ա/Ձ Միհրան Խաչատրյանի հետ կնքված պայմանագրերի համաձայն՝ «Ջիսիբի» մակնիշի տրակտորով և «Կամազ» բեռնատար ինքնաթափով համայնքի գյուղերում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կենտրոնական փողոցներին կից ջրատարների կողքի հողակույտերի մաքրում և բեռնում,
- Խմելու նոր ջրագծերի քանդում, լցնում և հարթեցում,
- Դաշտամիջյան առուների մաքրում,
- Դաշտամիջյան ջրատարների մաքրում,
- Մանկապարտեզների ջրագծերի քանդում,
- Հետադարձ ջրերի ջրատարների մաքրում,
- Կամուրջների կառուցում,
- Հուշարձանների տարածքների բարեկարգում,
- Փողոցների աղբի մաքրում և հարթեցում,
- Ճանապարհի եզրերի աղբի մաքրում, կանգառների համար հողի բեռնում և հարթեցում:

Իրականացված աշխատանքների դիմաց համայնքի բյուջեից վճարվել է ընդհանուր 13548,0 հազ. դրամ:

➤ Համայնքի գյուղերում կատարվել են կենտրոնական ճանապարհների հետիոտնային անցումների գծանշման աշխատանքներ, ընդամենը՝ 128 մ²/:

➤ Գրեյդեր տեխնիկայով համայնքի գյուղերում կատարվել են միջհամայնքային, գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Պետական և համայնքային միջոցների համաֆինանսավորմամբ իրականացվել են.

- Գայ գյուղի համայնքապետարանի շենքի հիմնանորոգում
- Գայ գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման 2-րդ փուլ տարածքի բարեկարգում
- Խորոնք գյուղի մանկապարտեզի երկհարկանի մասնաշենքի հիմնանորոգում
- Զրառատ գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
- Մեծամոր գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
- Առատաշեն գյուղի մանկապարտեզի երկհարկանի մասնաշենքի վերանորոգում
- Ապագա գյուղի մարզադպրոցի վերանորոգում
- Արաքս/Էջմ/ գյուղի մշակույթի տան հարակից այգու բարեկարգում

- Արաքս/Էջմ/ գյուղի մանկապարտեզի բակի բարեկարգում
- Ապագա գյուղի այգու կառուցում
- Ակնաշեն գյուղի 18-րդ փողոցի գազաֆիկացում
- Զրառատ գյուղի Իսահակյան, Թումանյան, Վ. Մամիկոնյան փողոցներում 1260մ երկարության գազատարի կառուցում:

Ուղղակի վաճառքի միջոցով օտարվել է 16 միավոր հողամաս:

Աճուրդով օտարվել է 7 միավոր հողամաս:

Մրցութային կարգով վարձակալության է տրամադրվել 5 միավոր հողամաս և ավագանու որոշմամբ՝ ոչ մրցութային կարգով վարձակալության է տրվել 3 միավոր հողամաս:

Հնարավորություն է տրվել թվով 49 քաղաքացիների ինքնակամ կառույցները օրինականացնելու, նաև թվով 15 քաղաքացիների տնամերձ հողամասերին կից ավել տիրապետվող հողամասերը սեփականություն ճանաչելու համար:

Արաքս համայնքի ավագանու որոշմամբ թվով 17 միավոր գյուղ. նշանակության հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոխադրվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական, թվով 2 միավոր գյուղ. նշանակության հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոխադրվել է բնակավայրի հասարակական կառուցապատման կատեգորիա, թվով 1 միավոր բնակավայրի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխադրվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական:

Համայնքի ղեկավարի որոշմամբ թվով 2 միավոր բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի գործառնական նշանակությունը փոխադրվել է բնակավայրի հասարակական կառուցապատման կատեգորիա:

Համայնքի ղեկավարի կողմից տրամադրվել է թվով 79 շինարարության թույլտվություն, թվով 104 նախագծման թույլտվություն և տրվել շինարարության ավարտման թվով 6 ակտ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ

- Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար կայացվել է համայնքի ղեկավարի 9 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 730,0 հազար դրամ, և տրամադրվել են համապատասխան թույլտվություններ: Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկի վաճառքի իրականացման թույլտվության համարկայացվել է համայնքի ղեկավարի 1 որոշում՝ համայնքային բյուջե

մուտքագրելով 60.0 հազար դրամ, և տրամադրվել են համապատասխան թույլտվություններ:

- Հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունների համար կայացվել է համայնքի ղեկավարի թվով 25 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 1060.0 հազար դրամ, և տրամադրվել են համապատասխան թույլտվություններ:
- Ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի իրականացման թույլտվության համար կայացվել է համայնքի ղեկավարի թվով 51 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 6893,6.0 հազար դրամ:
- Ժամը 24:00-ից հետո վիճակախաղերի իրականացման թույլտվության համար կայացվել է համայնքի ղեկավարի թվով 2 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 3500.0 հազար դրամ և տրամադրվել է համապատասխան թույլտվություն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԴՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Աղբահանությունը և ճանապարհների մաքրումը կատարվել են ժամանակին և բարեխղճորեն: Աշխատանքներ են տարվել բնակիչների հետ աղբը համապատասխան վայրում լցնելու վերաբերյալ:
- Բացատրողական աշխատանքներ են տարվել ավագ տեղափոխող ավտոմեքենաների վարորդների հետ, որպեսզի՝ բեռնված ավտոմեքենաները ծածկված լինեն համապատասխան ծածկոցով և վերահսկվել է նրանց աշխատանքը:
- Հանրային լուսման ժամանակ բացատրողական աշխատանքներ են տարվել համայնքի բնակիչների հետ այն մասին, թե ինչ վնաս և ազդեցություն են թողնում ավազահանքերն ու ավազի բեռնափոխադրումը շրջակա միջավայրի, մարդկանց, բնության և կենդանական աշխարհի վրա: Վերահսկողություն է սահմանվել <<Կարմիր>> գրքում գրված կենդանիների և թռչունների պահպանության գործում:
- Անասնաբույժների հետ համատեղ կատարվել են կենդանիների համարակալում և հաշվառում և ներկայացրել վիճակագրության վարչություն:
- 2022 թվականի գարնանը համայնքի ղեկավարի և անմիջական ղեկավարի գլխավորությամբ կազմավորվել է հանձնաժողով, որի ժամանակ ստուգվել են գյուղերում առաջացած ոռոգման ցանցերի հետ կապված խնդիրները և տրվել համապատասխան լուծում: Մաքրվել են դրենաժներն ու ոռոգելի առուները, փոխվել են կիսախողովակներ, մասնակի բետոնապատվել են ոռոգելի կիսախողովակներ:
- Բնակիչների խնդրանքով դիմել ենք մարզպետարան և ստացել 85,6 Լ մկնդեղ կրծողների դեմ պայքարի համար: Պատշաճ ձևով մկնդեղը օգտագործվել է համապատասխան հանդամասերում:

- Գարնանը կառավարության կողմից տրամադրված սուբսիդավորված կարբամիտ տեսակի 404.150տ և ազոտական 160.200տ պարարտանյութերը ժամանակին բաժանվել է համայնքի հայտ ներկայացրած բնակիչներին՝ հողերի համապատասխան քանակով:
- Ստեղծվել է հանձնաժողով, որի ընթացքում կատարվել են ստուգումներ ավագահանքերում և ձկնաբուծարաններում: Հիմնական նպատակը եղել է ստուգել օրինականությունը, տրվել է համապատասխան ցուցումներ թերությունները վերացնելու վերաբերյալ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՄՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2022 թվականին իրականացված աշխատանքների շնորհիվ նկատելի առաջընթաց է ապահովվել համայնքի կրթական, մշակութային և սպորտի բնագավառում, այդ բնագավառում, իրականացվել են մեծածավալ աշխատանքներ:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Արաքս համայնքում գործում է թվով 10 ՆՈՒՀ՝ 18 խմբով, որտեղ հաճախում են 533 երեխա, աշխատում է 142 հոգի: Նախադպրոցական կրթության ծառայություն մատուցվում է համայնքի թվով 10 բնակավայրում՝ Արաքս, Ապագա, Լուսազյուղ, Ջրարբի, Ջրառատ, Հայկաշեն, Գրիբոյեղով, Առատաշեն, Խորոնք, Արտիմեստ:

Արաքս համայնքի աջակցությամբ Արաքս գյուղում վերաբացվել է գյուղի ՆՈՒՀ-ը: «Focus on children now» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից Արաքս գյուղի նորաբաց ՆՈՒՀ-ի տարածքում տեղադրվել է խաղահրապարակ: Տրամադրվել է նաև մանկապարտեզի գրեթե ամբողջ գույքը, մարզասենյակի գույքը, 60 ներքնակ, 60 վերմակ, 60 բարձ, 2 հեռուստացույց և պրինտեր: Խոհանոցի և աշխատասենյակների գույքը, վարագույրները, քիվերը ձեռք են բերվել համայնքի միջոցներով:

Հայկաշեն բնակավայրում ևս համայնքի աջակցությամբ բացվեց ՆՈՒՀ, որը կառուցվել է <<ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԱՐԱՏ-ԶԱՐԳԱՑՈՒՄ-37>> ասոցացիայի ֆինանսական աջակցությամբ: Ասոցիացիայի կողմից տրամադրվել է ՆՈՒՀ-ի գրեթե ամբողջ գույքը, էլեկտրոտեխնիկան, տանիքում տեղադրվել է արևային կայան և ջրատաքացուցիչ: Համայնքի կողմից իրականացվել է մասնակի վերանորոգման աշխատանքներ, լուսավորության ավելացում, մեծ սառնարանի ձեռքբերում, նոր ջրագծի ավելացում:

Առատաշեն գյուղում «Focus on children now» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից ՆՈՒՀ-ին տրամադրվել է 66 մահճակալ, 66 սեղան, 66 աթոռ, 66 անկողնային պարագաներ: Առատաշեն բարեգործական հիմնադրամի կողմից ՆՈՒՀ-ին տրամադրվել է շինարարական և կահավորման նյութեր և մանկապարտեզի բակում տեղադրվել է խաղահրապարակ:

Լուսազյուղ և Գրիբոյեդով գյուղերում Արաքս համայնքի կողմից կատարվել են գազաֆիկացման աշխատանքներ:

Խորոնք և Ջրառատ գյուղերում պետություն-համայնք համագործակցությամբ մեկնարկել է ՆՈՒՀ-երի հիմնանորոգման աշխատանքները, որոնք կավարտվեն 2023 թվականին:

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Արաքս համայնքի ենթակայությամբ գործում են թվով 7 արտադարոցական կառույցներ.

- «Գայի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում սովորում է 152 աշակերտ և աշխատում՝ 14 աշխատակից:
Դպրոցի սաները մասնակցել են «Փոքրիկ քայլ» և «Պարատուն» մանկապատանեկան մրցույթ-փառատոններին, արժանացել՝ դիպլոմների և շնորհակալագրերի:
- Ապագայի «Վ.Մարգարյանի անվան մշակույթի տուն» ՀՈԱԿ-ում աշխատում՝ 5 աշխատակից: Մշակույթի տանը գործում են պարի, դիպլոմների և նկարչության խմբակներ:
- Խորոնք գյուղի «Խորոնքի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ն ունի 5 աշխատող: Մշակույթի տանը գործում են երգի, պարի, դիպլոմների խմբակներ: Մշակույթի տան սաները մասնակցել են Հանրապետական երաժշտական մրցույթ փառատոնին, արժանացել դիպլոմների և շնորհակալագրերի:
- Առատաշեն գյուղի «Առատաշենի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ն 5 աշխատող: Մշակույթի տանը գործում են երգի, պարի, մանրանկարչության և ըմբշամարտի խմբակներ: Պարի խմբակի սաները Վրաստանի Թեւալի քաղաքում մասնակցել են պարի միջազգային փառատոնին, <<ԿԱՆՁ>> համահայկական պարի փառատոնին և գրավվել առաջին հորիզոնական:
 - Ջրարբի գյուղի «Ջրարբիի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ն ունի 3 աշխատող: Մշակույթի տանը գործում են նկարչության, դիպլոմների, պարի խմբակներ:
 - Արաքս գյուղում <<Արաքսի մշակույթի տուն >> ՀՈԱԿ -ն ունի 4 աշխատող: Ներկա պահին խմբակներ չեն գործում:
 - Մեծամոր գյուղում <<Մեծամորի մշակույթի տուն >> ՀՈԱԿ -ն ունի 4 աշխատող: Մշակույթի տանը գործում են նկարչության, պարի, մարտեր առանց կանոնների խմբակներ:
<< պետական, մասնագիտական տոների, հիշատակի օրերի և երիտասարդների ժամանցի հետ կապված Արաքս համայնքի բնակավայրերում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ: Սուրբ Զատիկի տոն, Վերջին զանգին նվիրված միջոցառում, Ուսուցչի օր, Գրադարանավարի օր և այլն: Կազմակերպվել են նաև մի շարք միջոցառումներ նվիրված եղեռնի և արցախյան պատերազմների զոհերի հիշատակներին: Արաքս համայնքի մշակութային գործունեությանը զուգակցում են նաև ծառատունկներն ու

շաբաթօրյակները: Արաքս համայնքը մասնակցել է Դիլիջանում անցկացվող արվեստների և արհեստների միջազգային 10-րդ փառատոնին և բարձր մակարդակով մասնակցության համար արժանացել շնորհակալագրի:

Ամանորին համայնքի և Հակոբյաններ բարեգործական կազմակերպության կողմից բոլոր բնակավայրեր այցելել են Ձմեռ Պապը, Ձյունանուշը մուլտիերոսներ և միջոցառմանը ներկա գտնվող բոլոր երեխաներին անհատապես տրվել են նվերներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջոցներ են ձեռնարկվել հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին: Աշխատանքներ են տարվել համայնքում բնակվող կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են տնային այցելություններ, ուղղորդել նրանց սոցիալական աջակցության տարածքային մարմիններ և մասնագիտացված այլ կազմակերպություններ՝ իրենց իրավունքների մասին տեղեկանալու և ծառայություններից օգտվելու համար, ներկայացրել կառույցների գործունեության ոլորտը, աջակցության և մատուցվող ծառայությունների տեսակները, ծները:

Սոցիալական աջակցություն է ցուցաբերվել Արաքս համայնքի 13/տասներեք/ և բնակավայրերի 70/յոթանասուն/ ընտանիքների և տրամադրվել է դրամական օգնություն՝ 2 ,080,330 /երկու միլիոն ութսունհազար երեքհարյուրերեսուն/ ՀՀ դրամի չափով, ինչպես նաև սոցիալական աջակցություն՝ հագուստ և կոշիկի, վառելափայտի, հեծանիվի տեսքով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Համայնքապետարանի համապատասխան լիազորված ներկայացուցիչը մի շարք գործերով հանդես է եկել ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում՝ ոպես պատասխանող կամ երրորդ անձ, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ներկայացուցիչ՝ ի դեմս իրավասու մարմնի:
2. Դատական գործերի շրջանակներում նախապատրաստել են հայցադիմումների պատասխաններ, առարկություններ, միջնորդություններ և դիրքորոշումներ:
3. Համայնքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել են մի շարք վարչական վարույթներ, ապահովվել դրանց ընթացքը և եզրափակումը՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, ինչպես նաև ՀՀ հարկային

օրենսգրքով սահմանված իրավախախտումներ իրականացրած ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ, մասնավորապես՝

- 1) հողամասերը ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործման համար հարուցվել է թվով 6 վարչական վարույթ, որի շրջանակներում համայնքապետարանի բյուջե է մուտքագրվել 5.450.000 / հինգ միլիոն չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, 1 գործով 150.000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ նախատեսվում է վճարում առաջիկայում, իսկ մեկ վարչական ակտ բողոքարկվել է վարչական դատարան, ինչին Համայնքապետարանի կողմից պատրաստվել է համապատասխան առարկություն:
